ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

Երևան, 0010, Վ. Սարգսյան փ. 5

N _____

«10» 04 2023թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն Սիմոնյան,

«ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ ուղարկվում է ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Միհր Սամվելի Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագիրը և Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Առդիր՝
Միջնորդագիր՝ 16 (տասնվեց) էջ
Որոշման նախագիծ՝ 1 (մեկ) էջ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Աննա Վարդապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

Երևան, 0010, Վ. Սարգսյան փ. 5

N _____

«10» 04 2023թ.

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Միհեր Սամվելի Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին

2023 թվականի մարտի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով և 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախաձեռնված թիվ 59102423 քրեական վարույթով կատարված նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Միհեր Սամվելի Սահակյանը, ՀՀ Ազգային ժողովի վարչական 2-րդ մասնաշենքի թիվ 314 քննարկումների դահլիճում 2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը 10:05-ին, ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Արփինե Դավոյանի, Վիգեն Խաչատրյանի և Ալխաս Ղազարյանի, «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Արծվիկ Մինասյանի, Գեղամ Նազարյանի և ՀՀ կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի մասնակցությամբ սկսված փակ աշխատանքային քննարկման ժամանակ՝ ժամը 11:15-ի սահմաններում, խուլիգանական դրդումներով, այն է՝ նիստը նախագահող, ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) նախագահ Վլադիմիր Վարդանյանի՝ Արծվիկ Մինասյանի կողմից քննարկման թեմայից շեղվելու պատճառով նիստի բնականոն ընթացքը վերականգնելու և քննարկման թեմային վերադառնալու նպատակով մասնակիցներին արված դիտողությունը որպես առիթ օգտագործելով, սեփական անձի առավելություններն ընդգծելու ցանկությամբ, ցուցադրաբար հակադրվել է Վլադիմիր Վարդանյանին և ներկաների նկատմամբ անհարգալից, ինչպես նաև իրավական, այդ թվում՝ «ՀՀ

Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով՝ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ դրսևորել է ագրեսիվ վարքագիծ, ձեռքով հարվածել է սեղանին, ոտքի կանգնել, բղավելով դիտողություն արել Վլադիմիր Վարդանյանին՝ Հանձնաժողովի փակ քննարկման բնականոն աշխատանքը խոչընդոտելու դիտավորությամբ շրջանցել է իր և Վլադիմիր Վարդանյանի միջև նստած Ալխաս Ղազարյանին, մոտեցել Վլադիմիր Վարդանյանին և աջ ձեռքով դիտավորությամբ հարվածել նրա դեմքի ձախ քունքային շրջանին՝ պատճառելով առողջության թեթև վնաս առողջության կարճատև քայքայումով՝ ձախ վերհոնքային շրջանի պատռված վերքի, ձախ վերհոնքային, քթի մեջքի քերծվածքների, ձախ վերին և ստորին կոպերի արյունազեղումների ձևով:

Երևան քաղաքի դատախազությունում քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կատարված քննությամբ ձեռք են բերվել բավարար փաստական տվյալներ, որոնք հիմք են տալիս ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Մհեր Սամվելի Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով և 171-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝ 2023 թվականի մարտի 31-ին ՀՀ Ազգային ժողովի վարչական 2-րդ մասնաշենքի թիվ 314 քննարկումների դահլիճում Հանձնաժողովի փակ աշխատանքային քննարկման ժամանակ խուլիգանություն կատարելու և խուլիգանական դրդումներով Վլադիմիր Վարդանյանի առողջությանը թեթև վնաս պատճառելու համար:

ՀՀ սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

2. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի:

Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ազգային ժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պատգամավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս

հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը՝

(...)

14) իրավասու վերադաս դատախազին առաջարկում է դիմել իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Մինչդատական վարույթի ընթացքում վերադաս դատախազը՝

(...)

9) հսկող դատախազի առաջարկությամբ դիմում է իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով.

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Խուլիգանությունը՝ հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելը, որը դրսևորվել է անձին ստորացնելով կամ հայհոյանքներով կամ անպարկեշտ արտահայտություններով կամ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելով կամ նույն եղանակներով հանրային միջոցառումը, արարողությունը խափանելով կամ հասարակական նշանակության օբյեկտի, հիմնարկի կամ կազմակերպության բնականոն աշխատանքը խոչընդոտելով՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի համաձայն՝

«1.Մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է՝

1) առողջության կարճատև քայքայում կամ

2) ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

4) անչափահասի նկատմամբ,

5) մի խումբ անձանց կողմից,

6) մերձավոր ազգականի կողմից կամ

7) խուլիգանական դրդումներով՝

պատժվում է հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»

Վերոգրյալ իրավական կարգավորումների լույսի ներքո վերլուծելով թիվ 59102423 քրեական վարույթի նյութերը՝ պետք է արձանագրել, որ նախաքննության ընթացքում ձեռք է բերվել փոխկապակցված, վերաբերելի, թույլատրելի, հավաստի, հանցանքի կատարման մասին վկայող բավարար ապացույցների ամբողջություն առ այն, որ ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Միեր Սամվելի Սահակյանը, ՀՀ Ազգային ժողովի վարչական 2-րդ մասնաշենքի թիվ 314 քննարկումների դահլիճում 2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը 10:05-ին, ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Արփինե Դավոյանի, Վիգեն Խաչատրյանի և Ալխաս Ղազարյանի, «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Արծվիկ Մինասյանի, Գեղամ Նազարյանի և ՀՀ կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի մասնակցությամբ սկսված փակ աշխատանքային քննարկման ժամանակ՝ ժամը 11:15-ի սահմաններում, խուլիգանական դրդումներով, այն է՝ նիստը նախագահող, Հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանի՝ Արծվիկ Մինասյանի կողմից

քննարկման թեմայից շեղվելու պատճառով նիստի բնականոն ընթացքը վերականգնելու և քննարկման թեմային վերադառնալու նպատակով մասնակիցներին արված դիտողությունը որպես առիթ օգտագործելով, սեփական անձի առավելություններն ընդգծելու ցանկությամբ, ցուցադրաբար հակադրվել է Վլադիմիր Վարդանյանին և ներկաների նկատմամբ անհարգալից, ինչպես նաև իրավական, այդ թվում՝ «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով՝ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ դրսևորել է ագրեսիվ վարքագիծ, ձեռքով հարվածել է սեղանին, ոտքի կանգնել, բղավելով դիտողություն արել Վլադիմիր Վարդանյանին՝ Հանձնաժողովի փակ քննարկման բնականոն աշխատանքը խոչընդոտելու դիտավորությամբ շրջանցել է իր և Վլադիմիր Վարդանյանի միջև նստած Ալխաս Ղազարյանին, մոտեցել Վլադիմիր Վարդանյանին և աջ ձեռքով դիտավորությամբ հարվածել նրա դեմքի ձախ քունքային շրջանին՝ պատճառելով առողջության թեթև վնաս առողջության կարճատև քայքայումով՝ ձախ վերհոնքային շրջանի պատռված վերքի, ձախ վերհոնքային, քթի մեջքի քերծվածքների, ձախ վերին և ստորին կոպերի արյունազեղումների ձևով:

Այսպիսով՝ Միեր Սամվելի Սահակյանին մեղսագրվում է հանցավոր արարքների կատարում՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 297-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Միեր Սահակյանի կողմից վերոնշյալ հանցավոր արարքների կատարումը հաստատվել է քրեական վարույթի նախաքննությամբ ձեռք բերված մի շարք փաստական տվյալներով:

Մասնավորապես.

Տուժող Վլադիմիր Դավիթի Վարդանյանի ցուցմունքով այն մասին, որ 2023 թվականի մարտի 31-ին ՀՀ Ազգային ժողովի վարչական 2-րդ մասնաշենքի թիվ 314 քննարկումների դահլիճում տեղի է ունեցել Հանձնաժողովի փակ աշխատանքային քննարկում, որին մասնակցել են «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Արփինե Դավոյանը, Վիգեն Խաչատրյանը և Ալխաս Ղազարյանը, իսկ «Հայաստան» խմբակցության անդամներից մասնակցել են Արծվիկ Մինասյանը, Գեղամ Նազարյանը և Միեր Սահակյանը: Նիստին ներկա է եղել նաև ՀՀ կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը, ով հանդիսանում է ՀՀ միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչը: Նիստի ժամանակ քննարկվել են տարբեր հարցեր՝ կապված իրավական խնդիրների, ՀՀ արտաքին իրավական հարաբերությունների հետ, որի ընթացքը եղել է հանգիստ: Ժամը 11:15-ի սահմաններում Արծվիկ Մինասյանը շեղվել է քննարկման թեմայից և հարցեր է ուղղել Հայաստանի Հանրապետության «կորսված հողերի» վերաբերյալ, որի ժամանակ խմբակցությունների

պատգամավորների միջև բարձր ձայնով խոսակցություն է սկսվել: Այդ ժամանակ նիստի բնականոն ընթացքը վերականգնելու և քննարկման թեմային վերադառնալու համար, որպես քննարկման նախագահող, ինքը ոտքի է կանգնել և փորձել է հանդարտացնել պատգամավորների՝ ասելով, որ բոլորը հանդարտվեն և վերադառնան քննարկման հարցին: Իր իրավաչափ պահանջին ի պատասխան՝ Մեր Սահակյանն ասել է, որ իրենց վրա չգոռա: Ինքը պատասխանել է, որ նախ չի գոռացել, ինչպես նաև հավելել է, որ ցանկանում է շարունակել հանդարտ քննարկումը: Դրանից հետո Մեր Սահակյանը ևս մեկ անգամ կրկնել է, որ իրենց վրա չգոռա, որից հետո ինքը պարզաբանել է, որ քննարկման նախագահողն է, չի գոռում, այլ բոլորին կարգի է հրավիրում: Դրանից հետո Մեր Սահակյանը, առանց որևէ բառ ասելու, ձեռքը խփել է սեղանին, կանգնել է, մոտեցել է իրեն և առանց խոսելու՝ աջ ձեռքին առկա ինչ-որ առարկայով հարվածել է իր ձախ հոնքին: Այդ հարվածից ուժեղ ֆիզիկական ցավ է զգացել, ինչպես նաև ծակոց, որից հավասարակշռությունը կորցրել և ընկել է գետնին: Ընկնելուց դիպել է նախագահողի հետևում դրված աթոռին, որը շրջվել է: Մի քանի վայրկյան անց ոտքի կանգնելով՝ տեսել է, որ Մեր Սահակյանը հեռացել է դահլիճից, ինքը ևս դուրս է եկել և ցանկացել է տեսնել նրան, սակայն Մեր Սահակյանը դիմել է փախուստի: Ստացած հարվածից իր հոնքը վնասվել և արնահոսել է: Նշել է, որ ինքը որևէ գործողություն չի կատարել, Մեր Սահակյանին ընդառաջ չի գնացել, այլ ընդամենը կանգնել է տեղից, հնարավոր է՝ հարմար կանգնելու համար մեկ քայլ դեպի ձախ է գնացել, որից հետո բոլորին կարգի է հրավիրել, ինչին հաջորդել է Մեր Սահակյանի խոսելը և իր նկարագրած միջադեպը: Միջադեպից հետո միջանցքում գտնվելու ընթացքում իրեն է մոտեցել Արծվիկ Մինասյանը, ով ասել է, որ Մեր Սահակյանի քայլն անընդունելի է, չպետք է նման բան լիներ, իսկ հետո, երբ ինքը գնացել է աշխատասենյակ, իր մոտ է եկել Գեղամ Նազարյանը, ով նույնպես քննադատել է Մեր Սահակյանի արարքը՝ ասելով, որ իրենք կպատժեն նրան: Բողոքում է Մեր Սահակյանի դեմ և ցանկանում է, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության:

Վլադիմիր Վարդանյանը նշել է, որ Մեր Սահակյանի վարքագծի հետևանքով ընդհատվել է քննարկումը և խաթարվել է իրենց աշխատանքը:

Այն, որ իր հորդորները և կոչերը ուղղված չեն եղել Մեր Սահակյանին, այլ ուղղված են եղել Հանձնաժողովի անդամներին՝ քննարկման բնական հունը վերականգնելու համար, ինչպես նաև այն, որ միջադեպը տեղի է ունեցել նախագահողի աթոռի մոտ, քանի որ Մեր Սահակյանը, ձեռքը սեղանին շատ ուժեղ խփելուց հետո վեր կենալով իր տեղից, շրջանցել է իրենց միջև նստած Ալխաս Ղազարյանին և շարժվելով իր ուղղությամբ և հասնելով իր դիմաց՝ առանց որևէ բան ասելու հարվածել է իրեն, Վլադիմիր Վարդանյանը պնդել է նաև Մեր Սահակյանի և Արծվիկ Մինասյանի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:

Վկա Ալխաս Աղաբեկի Ղազարյանը ցուցմունքով այն մասին, որ 2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը 10:00-ին, Ազգային ժողովի շենքի 3-րդ հարկում գտնվող 314 համարի սենյակում սկսվել է Հանձնաժողովի աշխատանքային փակ քննարկումը՝ ՀՀ կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի մասնակցությամբ: Աշխատանքային քննարկումը նախագահել է Վլադիմիր Վարդանյանը: Քննարկմանը մասնակցել են Հանձնաժողովի անդամների մեծ մասը, այդ թվում՝ Միեր Սահակյանը, ով հանդիսանում է «Հայաստան» խմբակցության պատգամավոր: Միեր Սահակյանը և ինքը նստած են եղել կողք կողքի: Ինքը նստել է Հանձնաժողովի նախագահի անմիջապես կողքին՝ սեղանի աջ հատվածում, իսկ իր կողքին՝ Միեր Սահակյանը, ով երբևէ Հանձնաժողովի նիստերի ընթացքում այդտեղ չի նստել, և նրա այդտեղ նստելու նպատակը հետագայում հասկացել է՝ ելնելով նրա կատարած գործողություններից: Նիստն ի սկզբանե ընթացել է նորմալ, տեղի է ունեցել աշխատանքային քննարկում, սակայն Միեր Սահակյանի պահվածքն իրեն տարօրինակ է թվացել, քանի որ նրա մոտ ինչ-որ անհանգիստ վիճակ է նկատել, Միեր Սահակյանն անընդհատ հեռախոսով ինչ-որ գործողություններ է կատարել: Մինչ այդ Միեր Սահակյանը երբևէ Հանձնաժողովի նիստերի ընթացքում որևէ դիրքորոշում չի հայտնել և որևէ մեկին հարց չի ուղղել, իսկ նշված քննարկմանը ինչ-որ անիմաստ պատճառով նույնիսկ Հանձնաժողովի հյուրի՝ ՀՀ կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի հայտնածի կապակցությամբ անհամաձայնություն է արտահայտել: Աշխատանքային փակ քննարկման ընթացքում ինչ-որ հարցի շուրջ բանավեճ է սկսվել Արծվիկ Մինասյանի և իրենց խմբակցության պատգամավոր Վիգեն Խաչատրյանի միջև: Վլադիմիր Վարդանյանը, ցանկանալով հարթել իրավիճակը, մի փոքր բարձր տոնով, որպեսզի լսելի լինի, հորդորել է հիշյալ անձանց, որպեսզի հանգիստ խոսեն և շարունակեն քննարկումը: Դրանից անմիջապես հետո Միեր Սահակյանը, դիմելով Վլադիմիր Վարդանյանին, ասել է, որ չգոռա, որից հետո անմիջապես կանգնել է, բաց ափով ուժգին հարվածել սեղանին, այնուհետև մոտենալով Վլադիմիր Վարդանյանին, ով նույնպես կանգնել է, սակայն տեղից չի շարժվել՝ ձեռքով հարվածել է նրա դեմքին: Հարվածի պահին ինքը ուժգին ձայն է լսել և կարծել է, որ մետաղական իր է կոտրվել կամ դրա ձայնի պես մի բան, ինքը նույնիսկ մտածել է, թե Վլադիմիր Վարդանյանի ակնոցներն են կոտրվել: Հարվածի արդյունքում Վլադիմիր Վարդանյանը վայր է ընկել, իսկ Միեր Սահակյանը դիմել է փախուստի: Բոլորի համար զարմանալի է եղել Միեր Սահակյանի վարքագիծը: Միջադեպից հետո, երբ Վլադիմիր Վարդանյանը փորձել է գնալ Միեր Սահակյանի հետևից, Արծվիկ Մինասյանը կանգնեցրել է նրան և խնդրել, որ հանգստանա՝ նշելով, որ ինքն անձամբ կպատժի Միեր Սահակյանին: Միեր Սահակյանի գործողությունների ընթացքում խաթարվել է Հանձնաժողովի գործունեությունը, քննարկումը ընդհատվել և այլևս չի շարունակվել, քանի որ Միեր Սահակյանը բոլորովին անտեղի և առանց որևէ պատճառի

մոտեցել և հարվածել է Վլադիմիր Վարդանյանին:

Վերը նշված հանգամանքները Ալխաս Ղազարյանը պնդել է նաև Մեր Սահակյանի, Արծվիկ Մինասյանի և Գեղամ Նազարյանի հետ առերես հարցաքննությունների ընթացքում՝ հայտնելով, որ Վլադիմիր Վարդանյանի դիտողությունն ուղղված է եղել քննարկման բոլոր մասնակիցներին, այդ թվում՝ Վիգեն Խաչատրյանին և Արծվիկ Մինասյանին, ում միջև սկսվել է բանավեճը, և նպատակ է հետապնդել կարգի հրավիրել վեճի մասնակիցներին և հանդարտացնել վեճը: Մինչդեռ Մեր Սահակյանը, ձախ ձեռքի ափով հարվածելով սեղանին և ոտքի կանգնելով, ասել է, որ իրենք էլ կարող են գոռալ, որից հետո իր տեղից դուրս գալով՝ գնացել է դեպի նախագահողի կողմը: Ինքը չի հասկացել, թե ինչ է տեղի ունենում, սակայն շրջվելով տեսել է, թե ինչպես է Մեր Սահակյանը, իր աթոռի հետևում՝ քիչ դեպի նախագահողի կողմը կանգնած, հարվածել Վլադիմիր Վարդանյանին, ինչից վերջինս վայր է ընկել, իսկ Մեր Սահակյանը հեռացել է:

Վկա Վիգեն Սուրենի Խաչատրյանի ցուցմունքով այն մասին, որ ՀՀ Ազգային ժողովում տեղի է ունեցել Հանձնաժողովի հերթական քննարկումը, որը իրականացվել է փակ ձևաչափով, քանի որ քննարկվել են պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ: Քննարկումը հրավիրվել է ընդդիմության՝ մասնավորապես «Հայաստան» խմբակցության ներկայացուցիչների խնդրանքով, որին բացի Հանձնաժողովի յոթ անդամներից՝ Վլադիմիր Վարդանյանից, Գեղամ Նազարյանից, Արծվիկ Մինասյանից, Մեր Սահակյանից, Արփի Դավոյանից և Ալխաս Ղազարյանից հրավիրված է եղել նաև ՀՀ կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը: Քննարկումը սկսվել է առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում: Քննարկման ողջ ընթացքում ներկա անձանցից «Հայաստան» խմբակցության անդամ Մեր Սահակյանը որևէ հարցադրումով հանդես չի եկել, առհասարակ քննարկմանը չի մասնակցել, պարզապես ներկա է գտնվել և իր մոտ առկա բջջային հեռախոսով ինչ-որ գործողություններ է կատարել: Քննարկումը սկսելուց շուրջ 1 ժամ 30 րոպե անց Արծվիկ Մինասյանը շեղվել է քննարկվող նյութից, և Վլադիմիր Վարդանյանը՝ որպես Հանձնաժողովի նախագահ, վարողի իրավունքով դիտողություն է արել Արծվիկ Մինասյանին: Մեր Սահակյանը, ընդհատելով Վլադիմիր Վարդանյանին, ասել է, որ նա դիտողություն անելու իրավունք չունի: Այդ ժամանակ Վլադիմիր Վարդանյանը պատասխանել է, որ որպես քննարկումը վարող ունի այդ իրավունքը, որից հետո Մեր Սահակյանը, ձեռքը խփելով սեղանին, անմիջապես նստած տեղից բարձրացել է և մոտենալով Վլադիմիր Վարդանյանին՝ մեկ անգամ աջ ձեռքով անսպասելի հարվածել է նրա դեմքին: Վլադիմիր Վարդանյանը Մեր Սահակյանի մոտենալու պահին կանգնել է, որին անմիջապես հետևել է հարվածը, սակայն Վլադիմիր Վարդանյանը ընդառաջ չի գնացել: Մեր Սահակյանի հարվածը շատ ուժեղ է եղել, որից Վլադիմիր Վարդանյանն

ընկել է հատակին, իսկ Մեր Սահակյանը դիմել է փախուստի: Հանձնաժողովի նիստերի կամ քննարկումների ընթացքում Վլադիմիր Վարդանյանը մշտապես նստել է սեղանի գլխամասում, իսկ Մեր Սահակյանը՝ սեղանի հակառակ եզրային հատվածում, սակայն նշված քննարկմանը վերջինս նստել է Վլադիմիր Վարդանյանի մոտ, և նրանց բաժանել է միայն Ալխաս Ղազարյանը: Տպավորությունն այնպիսին է եղել, որ Մեր Սահակյանը նպատակադրված է այդտեղ նստել:

Վերը նշված հանգամանքները Վիգեն Խաչատրյանը պնդել է նաև Մեր Սահակյանի և Արծվիկ Մինասյանի հետ առերես հարցաքննությունների ընթացքում՝ հայտնելով, որ Վլադիմիր Վարդանյանը դիտողություն է արել նիստի մասնակիցներին՝ Արծվիկ Մինասյանի և Արփինե Դավոյանի միջև սկսված բանավեճից առաջացած իրավիճակը հանդարտացնելու և նիստի մասնակիցներին կարգի հրավիրելու նպատակով, որի ընթացքում Մեր Սահակյանը հանկարծակի բռնկվել է, ձեռքով շատ ուժեղ հարվածել է սեղանին ու ոտքի կանգնել, այնուհետև անսպասելի ձեռքով հարվածել Վլադիմիր Վարդանյանին, ով ընկել է և ոտքի կանգնել նախագահողի աթոռից մոտ մեկ մետր դեպի աջ հատվածում: Վիգեն Խաչատրյանը նշել է նաև, որ Մեր Սահակյանի վարքագիծն իր համար մնացել է անհասկանալի, քանի որ նա որևէ առիթ չի ունեցել բորբոքվելու. Վլադիմիր Վարդանյանը նրան չի դիմել, նրա հետ որևէ երկխոսության մեջ չի մտել:

Վկա Արփինե ՀրահատիԴավոյանի ցուցմունքով այն մասին, որ 2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, տեղի է ունեցել Հանձնաժողովի փակ քննարկում: Քննարկմանը մասնակցել են ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներ Ալխաս Ղազարյանը, Վլադիմիր Վարդանյանը, Վիգեն Խաչատրյանը և «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Արծվիկ Մինասյանը, Գեղամ Նազարյանը և Մեր Սահակյանը: Մեր Սահակյանը քննարկմանը մի փոքր ավելի ուշ է ներկայացել: Քննարկման ընթացքում քաղաքական հարցերի շուրջ վիճաբանություն է առաջացել, որի ընթացքում իրենք և «Հայաստան» խմբակցության պատգամավորները միմյանց հակադարձել են, ինչն արտառոց չէ և հաճախ է լինում: Ժամը 11:15-ի սահմաններում Հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը կանգնել է և ձեռքով հարվածել սեղանին՝ լռություն ապահովելու համար՝ ասելով, որ դադարեցնեն խոսակցությունը: Այդ ժամանակ Մեր Սահակյանը կանգնել է և շրջանցելով կողքին նստած Ալխաս Ղազարյանին՝ մոտեցել է Վլադիմիր Վարդանյանին ու բարձր տոնայնությամբ ասել է, որ ձայնը չբարձրացնի: Վլադիմիր Վարդանյանը պատասխանել է, որ անհրաժեշտության դեպքում կարող է ձայնը բարձրացնել, որից հետո Մեր Սահակյանը շատ անսպասելի հարվածել է Վլադիմիր Վարդանյանի ձախ աչքի շրջանին՝ քներակի մոտ ու վազելով դուրս է եկել դահլիճից: Հարվածի հետևանքով Վլադիմիր Վարդանյանը, կորցնելով հավասարակշռությունը, ընկել է: Մեր Սահակյանը

նախկինում երբևէ չի խոսել քննարկումների ընթացքում, իսկ այդ օրը տարօրինակ ակտիվ վարքագիծ է դրսևորել: Մեր Սահակյանի գործողությունների հետևանքով խաթարվել է Հանձնաժողովի բնականոն աշխատանքը: Վլադիմիրի Վարդանյանը կամ որևէ մեկն Մեր Սահակյանին չի վիրավորել, որևէ անպարկեշտ արտահայտություն չի արել և որևէ ագրեսիվ վարքագիծ չի դրսևորել. Վլադիմիր Վարդանյանն ընդամենը ասել է՝ «հերիք է վերջացրեք», և այդ կոչը բոլորին է ուղղված եղել, քանի որ վերջինս պատասխանատու է եղել քննարկման բնականոն ընթացքն ապահովելու համար:

Վերը նշված հանգամանքները Արփինե Դավոյանը պնդել է նաև Մեր Սահակյանի, Գեղամ Նազարյանի և Արծվիկ Մինասյանի հետ առերես հարցաքննությունների ընթացքում՝ հայտնելով, որ Վլադիմիր Վարդանյանի կողմից արված դիտողությունն ուղղված է եղել բանավեճը դադարեցնելուն և նիստի բնականոն ընթացքն ապահովելուն: Վլադիմիր Վարդանյանը կոնկրետ որևէ մեկին, այդ թվում՝ Մեր Սահակյանին նկատողություն չի արել, այլ նրա խոսքն ուղղված է եղել ներկա բոլոր պատգամավորներին, ինչպես նաև իրեն՝ Արփինե Դավոյանին: Վլադիմիր Վարդանյանը հարձակվելու և բռնություն գործադրելու մտադրություն չէր կարող ունենալ, քանի որ քննարկման ժամանակ որևէ արտառոց իրավիճակ չի եղել, ոչ մեկի հասցեին չի հնչել որևէ անհարգալից խոսք և ոչ մեկի չի հասցվել անձնական վիրավորանք:

Վկա Եղիշե Գրիգորի Կիրակոսյանի ցուցմունքով այն մասին, որ որպես ՀՀ կառավարության ներկայացուցիչ ներկա է գտնվել Հանձնաժողովի բոլոր այն նիստերին, որոնք վերաբերելի են միջազգային իրավունքին և իր կողմից իրականացվող գործունեությանը կամ այն կարգավորող օրենքներին: Իր ոլորտը կարգավորող մի շարք իրավակարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով «Հայաստան» խմբակցության ներկայացուցիչ Արծվիկ Մինասյանը խնդրել է, որպեսզի հրավիրվի Հանձնաժողովի նիստ, որի մասին տեղյակ են եղել ինչպես ինքը, այնպես էլ Հանձնաժողովի ղեկավար Վլադիմիր Վարդանյանը և անդամները: 2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը 10:05-ին, գտնվել է ՀՀ Ազգային ժողովում, որտեղ տեղի է ունեցել քննարկումը: Քննարկմանը բացի իրենից մասնակցել են Հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, անդամներ Վիգեն Խաչատրյանը, Գեղամ Նազարյանը, Արծվիկ Մինասյանը, Մեր Սահակյանը, Արփինե Դավոյանը և Ալխաս Ղազարյանը: Նիստը նախագահել է Վլադիմիր Վարդանյանը, ով նստած է եղել սեղանի գլխավերևում, իսկ նրանից աջ նստած են եղել ըստ հերթականության Արփինե Դավոյանը, ինքը և Արծվիկ Մինասյանը, իսկ Արծվիկ Մինասյանից աջ՝ Գեղամ Նազարյանը: Իրենց դիմաց՝ Վլադիմիր Վարդանյանից դեպի ձախ, նստած է եղել Ալխաս Ղազարյանը, նրա կողքը՝ Մեր Սահակյանը, իսկ Մեր Սահակյանի կողքը՝ Վիգեն Խաչատրյանը: Քննարկմանը գրեթե բոլորը ակտիվ մասնակցություն են ունեցել՝ բացառությամբ Մեր Սահակյանի: Քանի որ Արծվիկ Մինասյանը շեղվել է քննարկման հիմնական թեմայից, Վլադիմիր

Վարդանյանը վարողի իրավունքով դիտողություն է արել բոլորին՝ փորձելով կանոնակարգել նիստը և շարունակել թեմայի քննարկումը, սակայն Միեր Սահակյանը միջամտել է և ագրեսիվ պահվածք դրսևորել: Մասնավորապես, Միեր Սահակյանը կանգնել է և բղավելով՝ ձեռքը պարզել Վլադիմիր Վարդանյանի ուղղությամբ, շրջանցել պատգամավոր Ալխաս Ղազարյանին և մեկ անգամ աջ ձեռքով, որքանով հիշում է բռունցքի ներսի հատվածով, հարվածել է Վլադիմիր Վարդանյանի ձախ աչքի հատվածին: Հարվածից Վլադիմիր Վարդանյանը կորցրել է հավասարակշռությունը և ընկել հատակին, որից հետո Միեր Սահակյանը հեռացել է: Միջադեպի հետևանքով քննարկման բնականոն ընթացքը խաթարվել է:

Վերը նշված հանգամանքները Եղիշե Կիրակոսյանը պնդել է նաև Միեր Սահակյանի և Արծվիկ Մինասյանի հետ առերես հարցաքննությունների ընթացքում՝ նշելով, որ նիստը նախագահող Վլադիմիր Վարդանյանը պատգամավորներին է դիմել՝ նրանց միջև սկսված բանավեճը դադարեցնելու և թեմայից չշեղվելու նպատակով: Հայտնել է նաև, որ միջադեպի ընթացքում Միեր Սահակյանն է շարժվել դեպի Վլադիմիր Վարդանյանը, քանի որ այն պահից, երբ Միեր Սահակյանը կանգնել է և, ձեռքը մեկնելով դեպի Վլադիմիր Վարդանյանը, բղավել, իր ուշադրությունը սևեռված է եղել դեպի Միեր Սահակյանը, ով գնացել է Վլադիմիր Վարդանյանի ուղղությամբ և մեկ անգամ հարվածել նրա ձախ հոնքի հատվածին:

Վկա Գեղամ Արմենակի Նազարյանի ցուցմունքով այն մասին, որ 2023 թվականի մարտի 31-ին՝ առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում, ՀՀ Ազգային ժողովի 2-րդ մասնաշենքի թիվ 314 դահլիճում սկսել են Հանձնաժողովի փակ քննարկումը, որին ներկա են եղել ինքը, Արծվիկ Մինասյանը, Միեր Սահակյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանը, ով հանդիսանում է նաև Հանձնաժողովի նախագահը, Արփինե Դավոյանը, Վիգեն Խաչատրյանը, Ալխաս Ղազարյանը և ՀՀ կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը: Նիստի ընթացքը հանդարտ է եղել մինչ այն պահը, երբ շեղվել են բանավեճի և քննարկման թեմայից, մասնավորապես՝ Արծվիկ Մինասյանի, Արփինե Դավոյանի և Վլադիմիր Վարդանյանի միջև քննարկման օրակարգից դուրս բանավեճ է սկսվել: Այդ ժամանակ Վլադիմիր Վարդանյանը խոսել է բարձր ձայնով և ագրեսիվ տոնայնությամբ, ինչին ի պատասխան՝ Միեր Սահակյանը դիտողություն է արել՝ առաջարկելով չգոռգոռալ և խոսակցությունը հանգիստ վարել: Սկզբում իրեն թվացել է, թե Վլադիմիր Վարդանյանն ընդունել է Միեր Սահակյանի ասածը, սակայն լռելուց մի քանի վայրկյան անց Վլադիմիր Վարդանյանը, բղավելով ձեռքը խփել է սեղանին և ասել, որ ինչպես կցանկանա, այնպես էլ կխոսի, ինքն է որոշում, թե ոնց խոսի: Դրան ի պատասխան՝ Միեր Սահակյանը, ձեռքի բաց ափերը կողմ պարզելով, ասել է, որ նա չի կարող այդպես խոսել, որից հետո նույն բարձր

տոնայնությամբ խոսելով, նույն միտքն արտահայտելով՝ Վլադիմիր Վարդանյանը կանգնել է և քայլել Մեր Սահակյանի ուղղությամբ: Ինքը մտածել է, որ կխոսեն և կհանդարտվեն, սակայն այդ պահին Մեր Սահակյանը, տեսնելով իրեն մոտեցող Վլադիմիր Վարդանյանին, նույնպես ոտքի է կանգնել, մի փոքր հետ քայլ է արել, և երբ Վլադիմիր Վարդանյանը հասել է նրան, աջ ձեռքով հարվածել է Վլադիմիր Վարդանյանին, որից վերջինս անմիջապես ընկել է: Իր կարծիքով Մեր Սահակյանի կողմից Վլադիմիր Վարդանյանին հարվածելը պայմանավորված է եղել նրանով, որ կարծել է, թե Վլադիմիր Վարդանյանը պատրաստվում է իրեն հարվածել:

Գեղամ Նազարյանը Արփինե Դավոյանի և Ալխաս Ղազարյանի հետ առերես հարցաքննությունների ժամանակ նույնպես հայտնել է, որ բանավեճը սկսվել է Արփիինե Դավոյանի, Արծվիկ Մինասյանի և Վիգեն Խաչատրյանի միջև, ինչը դադարեցնելու համար է Վլադիմիր Վարդանյանը նկատողություն արել բանավեճի մասնակիցներին: Միևնույն ժամանակ նշել է, որ ինքը չի կարծել, որ բացի բանավոր խոսակցությունից հնարավոր է այլ բան տեղի ունենա:

Վկա Արծվիկ Գարեգինի Մինասյանի ցուցմունքով այն մասին, որ 2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, ՀՀ Ազգային ժողովի 2-րդ մասնաշենքի թիվ 314 դահլիճում սկսել են Հանձնաժողովի փակ քննարկում: Քննարկման ընթացքում բանավեճ է ծավալվել Հանձնաժողովի անդամներ Վիգեն Խաչատրյանի, Արփինե Դավոյանի և իր միջև, որին միջամտելով՝ քննարկումը վարող Վլադիմիր Վարդանյանը սկզբում արձագանքել է, որ դադարեցնեն զրույցը և այնուհետև չհիմնավորված մեղադրանքներ է հնչեցրել ՀՅԴ-ի հասցեին՝ նույնիսկ զավեշտի հասնող ձևակերպմամբ, որ Արարատ լեռը իրենք են թողել թուրքերին: Իրենք հակադարձել են, որ սխալ բաներ պետք չէ ասել, որին ի պատասխան՝ Վլադիմիր Վարդանյանը գոռգոռացել է՝ արտահայտելով իր մոտեցումները տարբեր թեմաների՝ ներառյալ Հռոմի ստատուտի, ներկա իրավիճակի վերաբերյալ, որին արձագանքել է Մեր Սահակյանը՝ հորդորելով, որ Վլադիմիր Վարդանյանը չգոռա՝ ասելով, որ իրենք նույնպես կարող են գոռալ: Ի պատասխան՝ Վլադիմիր Վարդանյանը ձեռքը խփել է սեղանին՝ ասելով, որ լավ է անում և ում վրա ուզենա և երբ ուզենա կգոռա: Մեր Սահակյանը նույնպես ձեռքը խփել է սեղանին և ասել, որ Վլադիմիր Վարդանյանը չի կարող գոռալ: Վլադիմիր Վարդանյանը շատ հանկարծակի կանգնել է և ագրեսիվ կեցվածքով քայլ արել դեպի Մեր Սահակյանը: Մեր Սահակյանը, մի քայլ ընկրկելուց հետո, ձեռքով հարվածել է Վլադիմիր Վարդանյանի դեմքի շրջանին: Միջադեպից հետո ինքը Վլադիմիր Վարդանյանին ասել է, որ կքննեն և եթե պատժելու անհրաժեշտություն լինի, իրենք կպատժեն Մեր Սահակյանին: Այդ արտահայտությունը անելով՝ նպատակ է ունեցել հանգստացնելու լարված իրավիճակը, որպեսզի միջադեպը նոր զարգացում չունենա:

Արծվիկ Մինասյանը Վլադիմիր Վարդանյանի, Արփինե Դավոյանի, Ալխաս Ղազարյանի, Եղիշե Կիրակոսյանի և Վիգեն Խաչատրյանի հետ առերես հարցաքննությունների ժամանակ հաստատել է, որ Վլադիմիր Վարդանյանի դիտողությունն ուղղված է եղել պատգամավորներին, մասնավորապես՝ վերջինս փորձել է դադարեցնել Վիգեն Խաչատրյանի և Արփինե Դավոյանի միջև սկսված բանավեճը, ինչին միջամտել է Մեր Սահակյանը, այնուհետև ձեռքով հարվածել Վլադիմիր Վարդանյանին:

Ձերբակալված Մեր Սամվելի Սահակյանի ցուցմունքով այն մասին, որ 2023 թվականի մարտի 31-ին Հանձնաժողովում տեղի է ունեցել փակ աշխատանքային քննարկում, որը սկսվել է ժամը 10:00-ի սահմաններում: Քննարկումը վարել է Հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը: Քննարկմանը մասնակցել են «Քաղաքացիական պայմանագիր» և «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Արփինե Դավոյանը, Վիգեն Խաչատրյանը, մի կին պատգամավոր, որի անունը չի հիշել, ինքը, Գեղամ Նազարյանը, Արծվիկ Մինասյանը, ինչպես նաև ՀՀ կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը: Տեղի է ունեցել թեժ քննարկում, որի ընթացքում Վլադիմիր Վարդանյանը դրսևորել է անհավասարակշիռ վարքագիծ, բղավել ընդիմադիր պատգամավորների վրա: Մասնավորապես, Վլադիմիր Վարդանյանը, գոռալով բռունցքը հարվածել է սեղանին և վիրավորել ընդիմադիր պատգամավորներին՝ մեղադրելով ոչ հայամետ դիրքորոշման մեջ: Վլադիմիր Վարդանյանի ձեռքը սեղանին հարվածելուց հետո, ինքը նույնպես ձեռքով հարվածել է սեղանին, կանգնել և կանգնած տեղից պահանջել է չվիրավորել, խոսել հարգալից և դուրս չգալ էթիկայի նորմերից: Վլադիմիր Վարդանյանը, շարունակելով նույն վարքագիծը, ագրեսիվ քայլել է իր ուղղությամբ՝ գոռալով հետևյալը. «լավ եմ անում, ում վրա ուզեմ կգոռամ»: Հաշվի առնելով, որ նրանց խմբակցությունն ընդունակ է բռնություն գործադրել, հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած հանրությանը հայտնի վիճաբանությունները, գնահատելով հնարավոր հարվածի վտանգը որպես իրական՝ բնազդաբար, ինքնապաշտպանության նպատակով աջ ձեռքի բռունցքով մեկ անգամ հարվածել է Վլադիմիր Վարդանյանի դեմքին և անմիջապես դուրս եկել սենյակից, որպեսզի միջադեպը չընդլայնվի, չշարունակվի: Դուրս գալուց հետո անմիջապես գնացել է փորձագետների սենյակ, որը գտնվում է այլ մասնաշենքում: Որոշ ժամանակ հետո գնացել է խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի աշխատասենյակ, որտեղից ոստիկաններն իրեն ձերբակալել և բերման են ենթարկել: Այդ ընթացքում դռների փեղկից բռնվել է և ոստիկանների կողմից իրեն քաշելու ժամանակ դռան կողպեքի ելուստից վնասվել է աջ ձեռքի ճկույթը և աջ ոտքի ազդրը: Իր աջ ձեռքի մատնեմատի վրա առկա է արյան զեղում, այտուց և քերծվածք, որոնք առաջացել են այդ հարվածի արդյունքում, հարվածելիս իր ձեռքում որևէ առարկա չի եղել:

Մեր Սահակյանը Վլադիմիր Վարդանյանի, Արփինե Դավոյանի, Ալխաս Ղազարյանի, Եղիշե Կիրակոսյանի և Վիգեն Խաչատրյանի հետ առերես հարցաքննությունների ընթացքում ևս ընդունել է իր կողմից Վլադիմիր Վարդանյանի դեմքին հարվածելու հանգամանքը:

Դեպքի վայրի զննության արձանագրությամբ, համաձայն որի՝ դեպքի վայր է հանդիսանում Երևան քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող ՀՀ Ազգային ժողովի վարչական 2-րդ մասնաշենքի 3-րդ հարկի թիվ 314 դահլիճը: Դեպքի վայրի զննությամբ աջ պատի տակ առկա մուտքից 9-րդ աթոռի նստատեղի եզրային հատվածում և նույն աթոռի դիմաց հայտնաբերվել են արնանման նյութի հետքեր: Նույնանման հետքեր են հայտնաբերվել նաև 10-րդ աթոռի դիմաց, 10-րդ աթոռի և 1-ին աթոռի վրա:

Զննության մասնակից Վլադիմիր Վարդանյանը, մատնացույց անելով իրենից ձախ 2-րդ աթոռը, հայտնել է, որ նշված աթոռին քննարկման ժամանակ նստած է եղել Մեր Սահակյանը, ով իրեն դիտողություն է արել իբրև բարձր տոնայնությամբ խոսելու համար, որից հետո կանգնել է նստած տեղից, մոտեցել իրեն և հարվածել իր ձախ հոնքի շրջանում՝ պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ և մարմնական վնասվածք, որի հետևանքով ինքը վայր է ընկել, հոնքը սկսել է արնահոսել, իսկ Մեր Սահակյանը դիմել է փախուստի:

Դատաբժշկական թիվ 0364 եզրակացությամբ այն մասին, որ Վլադիմիր Վարդանյանի մարմնական վնասվածքներն ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի և օբյեկտիվ ուսումնասիրության տվյալների՝ ձախ վերհոնքային շրջանի պատռած վերքի, ձախ վերհոնքային, քթի մեջքի քերծվածքների, ձախից վերին և ստորին կոպերի արյունազեղումների ձևով պատճառվել են բութ, կոշտ առարկայով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում և հանգամանքներում, չի բացառվում նաև կոտրված մկրատով, որոնք հնարավոր չէ տարանջատել միմյանցից և առաջացրել են առողջությանը թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով՝ նկատի ունենալով վնասվածքների հետ անմիջական պատճառական կապի մեջ եղած հետևանքների տևողությունը:

Դատաբժշկական փորձագետ Իշխան Ֆրունզիկի Մելքոնյանի ցուցմունքով այն մասին, որ Վլադիմիր Վարդանյանի ձախ հոնքային շրջանի մարմնական վնասվածքները չէին կարող առաջանալ Մեր Սահակյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված և դատաբժշկական փորձաքննությանը ներկայացված կոտրված մկրատի եզրային սուր մասի ուղղակի ազդեցությամբ, քանի որ այդ պայմաններում պատճառված վնասվածքը կլիներ ոչ թե պատռված վերքի, այլ ծակած վերքի ձևով:

ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության փորձագետ Վահե Զաքարի Գրիգորյանի ցուցմունքով այն մասին, որ 2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը

11:30-ի սահմաններում, երբ ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության փորձագետ Աղասի Մաթիլյանի և Արծվիկ Մինասյանի օգնական Արամ Մկրտչյանի հետ գտնվել է ՀՀ Ազգային ժողովի հին մասնաշենքի 2-րդ հարկում գտնվող իրենց աշխատասենյակում, շփոթված ներս է մտել Միեր Սահակյանը: Վերջինս շատ լարված փորձել է պատմել տեղի ունեցածի մասին, և միաժամանակ աշխատասեղաններից մեկի վրայից վերցնելով մկրատը՝ զայրույթից ջարդել է այն, ինչի հետևանքով մատը վնասվել է:

Նույնաբովանդակ ցուցմունքներ են տվալ նաև ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության փորձագետ Աղասի Հակոբի Մաթիլյանը և Արծվիկ Մինասյանի օգնական Արամ Տիգրանի Մկրտչյանը:

Աղասի Մաթիլյանը վարույթն իրականացնող քննիչին է ներկայացրել Միեր Սահակյանի կողմից իր աշխատասեղանից վերցված մկրատի կոտրված բռնակը և հայտնել, որ այն գտել է Միեր Սահակյանի գնալուց հետո և դրել է իր աշխատասեղանի դարակում: Միաժամանակ հայտնել է, որ երբ դեպքից հետո Միեր Սահակյանը շփոթված վիճակում մտել է իրենց սենյակ և պատմել տեղի ունեցածի մասին, իր աշխատասեղանից վերցրել է սև պոչով մկրատը և նյարդային վիճակի և լարված շարժումների պատճառով բռնակը կոտրել է, իսկ մկրատը, ենթադրում է, որ իր հետ տարել է:

Միեր Սահակյանի արյան մեջ թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ինչպես նաև ալկոհոլի առկայությունը պարզելու նպատակով քրեական վարույթի ընթացքում որոշումներ են կայացվել դատաքիմիական փորձաքննություն նշանակելու մասին, սակայն Միեր Սահակյանը հրաժարվել է հետազոտման համար նմուշներ ստանալու մասին որոշման պահանջը կատարելուց և արյան նմուշ հանձնելուց:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները գնահատելով համակցության մեջ՝ անհրաժեշտ է փաստել, որ մինչև միջադեպը Միեր Սահակյանի և Վլադիմիր Վարդանյանի միջև թշնամական կամ այլ կոնֆլիկտային հարաբերություններ չեն եղել: Վլադիմիր Վարդանյանը, հանդիսանալով Հանձնաժողովի նախագահ և նիստը վարող, Արծվիկ Մինասյանի, Արփինե Դավոյանի և Վիգեն Խաչատրյանի միջև քննարկման թեմայից դուրս ծավալված բանավեճը հանդարտացնելու և նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով դիտողություն է արել վերջիններիս: Մինչդեռ Միեր Սահակյանը, սեփական անձի առավելություններն ընդգծելու նպատակով, չնչին առիթն օգտագործելով, ներկաների նկատմամբ անհարգալից, իսկ իրավական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք դրսևորելով, խուլիգանական դրդումներով խաթարել է միջոցառման բնականոն ընթացքը և Վլադիմիր Վարդանյանի՝ ոչ անմիջապես իրեն ուղղված դիտողությունն օգտագործելով՝ Հանձնաժողովի և ՀՀ Ազգային ժողովի բնականոն աշխատանքը խաթարելու դիտավորությամբ հարվածել է Վլադիմիր Վարդանյանին:

Հատկանշական է նաև, որ թեև վկաներ Արծվիկ Մինասյանը և Գեղամ Նազարյանը ցուցմունքներով նշել են, որ Վլադիմիր Վարդանյանը ագրեսիվ ձևով քայլել է դեպի Միեր Սահակյանը, սակայն միջադեպից հետո Վլադիմիր Վարդանյանի հետ զրույցում ընդունել են Միեր Սահակյանի հակահիրավական վարքագիծը և վերջինիս պատժելու պատրաստակամություն են հայտնել:

Հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Միեր Սամվելի Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու համար ՀՀ Ազգային ժողով դիմելու վերաբերյալ հսկող դատախազի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով,

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ե Մ՝

Տալ համաձայնություն ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Միեր Սամվելի Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ:

Աննա Կարենի Վարդապետյան

Նախագիծ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՄԻՀԵՐ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ազգային ժողովի պատգամավոր Միհեր Սամվելի Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագրին տալ համաձայնություն:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ**